ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ
համայնք, Գ.ԱՐՋՈՒՏ, Հեռ. 093 19 91 34 ,
arjut.lori@mta.gov.am

N ԳԱ83
14 մայիս 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արջուտ համայնքի ղեկավարի թիվ 34-Ա որոշումը:

14.05.2018

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատ. `

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 34-Ա

« 11 » մայիսի 2018 թվականի

Վարձակալության իրավունքով տրամադրված հողամասը վարձակալին ուղղակի վաճառքով վաճառելու մասին

Հիմք ընդունելով Արամ Ամիրամի Օհանյանի դիմումը, 30.08.2012թ թիվ 4591 վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիրը, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 07092012-06-0169 վկայականը, համայնքի ավագանու որոշումը, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ, 64-րդ, 66-րդ հոդվածները, ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 43 հոդվածը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածը

Որոշում եմ

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 29/12/2005 թվականի N 2393-Ն որոշմամբ Արջուտ համայնքում գտնվող և Արամ Ամիրամի Օհանյանին վարձակալության իրավունքով տրամադրված 06-019-0110-0025 ծածկագրով 0.10796 հողամասը ընդգրկված է սեփականության իրավունքով համայնքին փոխանցված հողամասերի ցանկի մեջ, 0.10796 հա գյուղատնտեսական վարելահողը 73150 ՀՀ դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել վարձակալ Արամ Ամիրամի Օհանյանին :
2. Հողամասերը չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ձանաչումը չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ չեն առաջացնում սերվիտուտ:
3. Արամ Ամիրամի Օհանյանին հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:
4. Սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման ԱԳ Կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար **Վ. Մկրտչյան**